

ւոյն համար» նպատակ սահմանելով. իսկ Օշինն ու Շահանը ոչ. վասնզի չունէր այդպիսի եղբայր ու փեսայ:

Գ. — Եթէ Հեթումեան Կոստանդին Գ. ի որդին Օշին անժառանգ վախճանեցաւ, եղբորը նման, եւ Լուսինեան Լեւոն Ե. ի եղբայրը Բոյեմոնդ (Բեռնարդինոսէ Օշին մկրտուած) մեռաւ նախ քան անոր դահաւալութիւնը, եւ հարազատին պէս՝ անձեռ, ուրեմն ատուց հետ աղերս չունին Լոլի-Լուսինեանները: Ո՞վ էր ուրեմն եւ ո՞ր տոհմին կը պատկանէր այն Օշինը, որ յետ Լեւոնի աքսորման՝ տարիներով կ'ապաստանի Տաւրոս ու կը սպանուի հոն, ըստ Բեռնարդինոսի, եւ Կոստանդին հօրն ու Բալդուին որդւոյն հետ կը յիշուին այս վերջինին տապանին վրայ:

Այդ անուններուն պատմականութեան ապահովագոյն ապացոյցները՝ երկու տապանաքարերը պիտի ըլլային: Սակայն անոնց մէջ ալ կ'աւանդուէր տեղիք կայ: Արմերիկ, որ «Եկեաց ամս ՀԴ» կ'ըսուին հոն՝ կը վախճանի 1474ին, որով ծնած էր 1400-ին: Եւ եթէ միջին հաշուով՝ երեսնամեայ խորոց մը դնենք իր եւ հօր միջեւ, Բալդուինի ծնունդը կը հանդիպի 1370ին, Օշինինը՝ 1340ին, եւ Կոստանդինինը՝ 1310-ին: Այս հաշիւով, այդ անձերը ժամանակակից կ'ըլլան Հեթումեան վերջին եւ Լուսինեան թագաւորներուն. մանաւանդ թէ իրենց երիցագոյնին ծնունդը կը զուգադիպի իր անուանակից Կոստանդին Գ. ի ծննդեան հետ, ասոր հօրմէն նշանակուած 1313ին (իր ճաշոցին մէջ). որով այդ արքային որդւոյն՝ Օշին մերձաւոր 1333 թրւականն ալ կը հանդիպի միւս համանունին 1340ին:

Այդ անուններու եւ տարիներու զուգադիպութեանց նպատակն էր անշուշտ՝ իր անձերը պատմական ծանօթ ու փայլուն դէմքերու հետ հաւասարեցնել: Ասիկա կը դատեն՝ նախ «Լուսինեան» մականունը տրուած անոնց. երկրորդ՝ անուններու զետեղումը չիրմաներուն վրայ Բեռնարդին-

եան թիւով ու կարգով. Կոստանդին - Լեւոն եւ Օշին - Բալդուին - Արմերիկ - Յակոբ Կոստանդին: Հոսակ՝ Բալդուինի արձանագիրը կ'ընէ՝ թէ «արիաքար ֆգնեցաւ դարձուցանել Հայաստանի գագաւոր-իւն, զոր հօրեղբայր իւր չարաբաստիկն Լեւոն կորոյս, հաւասարեցնելով նոյնպէս այդ Լեւոնը՝ մեր վերջին թագաւորին հետ:

Միակ հետեւութիւնը՝ զոր կրնանք հանել ատկէ, այն է՝ թէ այդ խառնաչիւղթ աղգարանութեան յօրինումը տապանագրութեանց ժամանակէն է, ինչպէս նախապէս ալ ըսինք: Չենք դիտեր թէ որչափ մաս ունին ասոր մէջ Բալդուին եւ Արմերիկ: Բայց վերջին խմբագրութիւնն ու լրացումը Յակոբ-Կոստանդինի է, ինչպէս տեսանք վերեւ, որ կաղմեց երկու տապանագրերը՝ մօր եւ իր անուններն ալ խառնելով անոնց մէջ. «Աննա Եղիսաբեթ Լոլիա ամուսին, Յակոբ Կոստանդին որդի Եղիմ»։ Վասնզի իր հաւր չէր կարող այլաբերպել իր իսկ հայրն ու պապը, որ լաւ ծանօթ էին իրեն:

Շատ որոշ եւ ապահով է այդ տապանագրութիւններուն մէջ նշանակուած անձերու արեւակցական զօդը՝ Բալդուինէն ասդին: Ստոյգ պիտի համարէինք Օշին ու Կոստանդին նախորդ անուններն ալ, եթէ անոնց կերպարանքը խանդարուած չըլլար:

Արդ, եթէ Լոլի Լուսինեանները արեւակցական ուղիղ կցորդութիւն չունին ոչ պսակաւոր Հեթումեանց եւ ոչ հայ Լուսինեանց հետ, սակայն Բալդուինի փորձը Կիլիկիոյ ազատութեան՝ իրմէ իսկ պատմուած ու չիրիմին վրայ յիշատակուած, որուն կասկածելու պատճառ մը չունինք, կը վկայէ՝ թէ իրենց տոհմն իշխանական էր, Կիլիկիոյ ազնուականութենէն, եւ թերեւս Հեթումեան բաղմանիւղ տոհմին մէկ շառաւիղը. որով զազաւարն ու յանդրդնութիւնը ունեցաւ այդ ազնուական ձեռնարկին, որ հասարակ մարդու գործ չէր: Իսկ իր թոռը՝ անտեղեակ տոհմին

ցեղազրութեան, եւ լաւագոյնին ցանկացող, կերտեց այդ շիւթ աղգարանութիւնը: Ասկէ աւելի չեն ներեր կրակացնել՝ մեղի ծանօթ վաւերական ու անվաւեր յիշատակարանները:

Ի տեղեկութիւն մեր ընթերցողներուն, այստեղ կու տանք Tivoli-ի S. Maria Maggiore եկեղեցիին մէջ գտնուած Լոլի - Լուսինեան տոհմին տապանագրերը.

IN NONE DNI AMEN
HIC REQ. CORPUS NOB. DNI BALDOVINI
DE LUSIGNANO FIL. OSCHINI COSTANTINI
STRENUE CONAVIT ARMENIÆ REDDERE
LIBERTAM QUAM SUUS PATRUUS INFELIX

LEO PERDIDIT
OBIIT ANNO DNI MCCCCXXXI
MENSE JUNIO - DIE IX
CUIUS A - IA - REQ. IN P. AMEN

NOB. DOMINO ALMERICO LOLLIO
DE LUSIGNANO
BALDOVINI OSCHINI FIL.
ANNA ELISA LOLLIA UXOR
JACOBUS COSTANTINUS FILIUS
POSUERE - VIXIT ANNOS LXXIV
OBIIT FEBRUARIO
DIE XI
ANNO SAL. CHR. MCCCCLXXIV

D. O. M.
IN MEMORIAM
NOBILISSIMI DOMINI
FRANCISCI ANTONII LOLLI de LUSIGNANO
VIRTUTE ANIMI ET CORDIS
PERSPICUITATE MENTIS
PRÆCLARISSIMI VIRI
PAOLA MARIA RONCETTI UXOR
JACOBUS EUGENIUS FILIUS
MÆSTISSIMI

P. P.
OBIIT TYBURE A. D. MDCCXLVIII
ÆTATIS SUÆ LXX

~ ~ ~

D. O. M.
NOBILI DOMINO
ALOYSIO LOLLIO DE LUSIGNANO
JACOBUS FILIUS
PATRI AMATISSIMO
AMORIS ET DOLORIS
MONUMENTUM
POSUIT
OBIIT TYBURE ANNO MDCCC
DIE XXXI JULII
VIXIT A. LXXI. ML. D. V.

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

